



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

« 25 » մարտի 2020 թվականի N: 123-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով «Գյումրու Էներկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2020 թվականի մարտի 17-ի N 23 գրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. «Գյումրու Էներկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-32) անհատական կազմում Էդիկ Ստեփանյանի փոխարեն ընդգրկել Էմանուել Պապիկյանին:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի մարտի 30-ի «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության առողջապահական կազմակերպություններում հանձնաժողովներ ձևավորելու, հանձնաժողովների անհատական կազմերը, աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 9-ի N 70-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 62-Ա որոշման 1-ին կետով հաստատված 5-րդ հավելվածի 3-րդ կետում «Էդիկ Ստեփանյան - Սոցիալական ծառայության Գյումրի-2 տարածքային բաժնի մասնագետ, հանձնաժողովի անդամ» բառերը փոխարինել «Էմանուել Պապիկյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Գյումրի-2 տարածքային բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար, հանձնաժողովի անդամ» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ 6729 է

